

սկսեց: Երկրորդ դասին Հիլէլը սկսեց նոյն տառերն ասել մէկը միւսի անունով:

— Զէ՞ որ այդ ուղիղ չէ—ասաց աշակերտը:

— Ո՞րտեղից ես իմանում, որ ուղիղ չէ,—հարցրեց սրամիտ Հիլէլը. «Ուրմն դու հաւատում էիր իմ բերանացի բացատրութեանը: Իսկ եթէ դու հաւատում ես առանձին տառերի բացատրութեանը, այն ժամանակ դու պարտական ես հաւատալ նաև օրէնքի բերանացի բացատրութեանը»:

Հիլէլը վախճանուեց քրիստոնէական դարի 10-րդ տարին, որի մահը դառնապէս ողբացին հրէաները, և որը խորին հէտք թողեց հին պատմութեան և գրագիտութեան մէջ: «Այլևս չկայ համեստը, այլևս չկայ ազնիւը, այլևս չկայ էղբայի արժանաւոր աշակերտը», յիշում է իւր ուսուցչին Սօտա-ն, որ ժողովրդի վիճակը թեթեացրեց, հոգս քաշելով յատկապէս աղքատների համար և ձգտելով Աստուծոյ թաղաւորութիւնը հաստատել ոչ թէ երկնքում, այլ երկրիս վերայ կենդանութեան ժամանակ:

Ռուս. քարզմ. Արսակ վարդապետ.

ՆՈՐ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ*)

Պատուո՞ր Ե. Բարսի

Այն վէճը, թէ ո՞ր էտիկան համապատասխանում է իսկական բարոյականին—արդեօք կրօնականը թէ արտաքոյ կրօնի էտիկան, կամ ուրիշ խօսքով՝ արդեօք հնարաւոր է բարոյականի գոյութիւնը առանց կրօնասիրութեան, թէ բարոյականի արմատը հարկաւորապէս կրօնն է,—այս վէճը լոկ միայն բառերի բանակռիւ կը լինի, մինչև որ կանխաւ մօտաւորապէս չորոշուի, թէ ինչ ենք հասկանում «կրօն» գաղափարով: Մօտաւորապէս—ըստ որում արդի ժամանակում հազիւ թէ հնարաւոր լինի այնպիսի սահման տալ կրօնին, որ ժամանակակիցներից իւրաքանչիւրին այն ընդունելի լինի: Ոմանց համար սահմանը խիստ լայն կը լինի, ոմանց համար՝ խիստ նեղ: Էլի աւելի լաւ է, որ սահմանը որչափ կարելի է լայն գծուի, որպէս զի գաղափարը ընդհանրագոյն ծաւալ ստանայ, բայց ի հարկէ այն էական նշանով, թէ «կրօնը» այնքան որոշ, անկախ, «ինքնուրոյն»

*) «Вѣстникъ Знаній» № 4.

գաղափար է, որ բոլորովին դատուում է ուրիշ բոլոր գաղափարներին: Այս դժուարութեան հանդէպ՝ աւելի հեշտ է բացատրական կերպով խօսել, թէ ո՞ր բանը կրօն չէ, եթէ զոր օր. կրօն ասելով՝ դաւանութիւն հասկանանք, իսկոյն մեր փնտռած պատասխանն էլ կը ստացուի: «Դաւանական բարոյականը» ինքնըստինքեան մի հակասական գաղափար է, որովհետեւ այդ մտածմամբ բարոյականը ինքնիշխանութիւնից զրկվում է և ստորակարգւում է որոշ դաւանանքներին, հետեւապէս դաւանութիւնը բարձր է կարգվում, քան բարոյական զգացմունքը: Այս դէպքում ամէն մի բարոյական վճիռ ներքին բռնադատութեան կամ հարկադրութեան դօրծիք կը դառնայ, և ոչ թէ ազատութեան ծնունդ: Ճշմարիտ բարոյական զգացմունքը միշտ ձգտել է բարոյականութիւնը անկախ կացուցանել եկեղեցական պաշտամունքից: Այս բանի օրինակն են տալիս Կանտը, Ֆիխտէն, Շլայէրմախէրը: Այսպէս և ս նորագոյն բարոյախօսները աշխատում են բարոյականը հիմնել յատկապէս բանականութեան վրայ, կեանքի և բնութեան օրէնքների վրայ: Ահա այդ մտքով են խօսում բնական էտիկայի կամ հէնց պարզապէս էտիկայի մասին: Իսկ այս կերպի հասկացողութիւնը ամենեւին չի նշանակում ոչ թշնամութիւն կրօնին, և ոչ պահանջ՝ որ եկեղեցին բաժանուի պետութիւնից, եկեղեցին դատուի գալրոցից և գալրոցից վերանայ կրօնագիտութեան ուսումը: Այդ բոլոր ջանքը ուղղուած է միայն եկեղեցու ոտնձգութեան դէմ՝ կեանքի այնպիսի բաժինների վրայ, որոնք իրաւամբ իրանց համարում են հասունացած՝ անկախ ինքնավարութեամբ ապրելու համար: Այս պահանջները մղւում են նոյն իսկ կրօնի մաքրութեան անունով:

Արդ, հարցնում ենք—արդեօք մօրալը կարիք ունի, որ հաստատուած լինի կրօնի վրայ, արդեօք իսկական բարոյականութիւնը զարգանում է միմիայն կրօնասէր մարդկանց մէջ. թէ կրօնն ու բարոյականութիւնը իրարից ոչինչ կախում չունին: Արդեօք վերջինը չունի իւր սեպհական կեանքը, ուրեմն իւր սեպհական օրէնքները, սեպհական հիմքերն

ու սահմանած ասպարէզը»։ Այս հարցումների պատասխանը, որչափ կարելի է, պէտք է լինի ազատ կանխակալ կարծիքներից։

Որպէս զի սխալ չհասկացուիմ, պէտք է տւելացնեմ, որ էտիկա կամ բարոյական անունով իմացվում է բարոյախօսութեան գիտութիւնը, իսկ բարոյականութիւն անունով՝ մարդկային բարոյական վարքը։ Այս երկու գաղափարների սահմանները միշտ ճշգիւ չեն որոշել։ Սակայն չպէտք է մոռանալ, որ եթէ մենք խօսում ենք կրօնից ազատագրուած բարոյականի մասին, այս նշանակում է, որ մենք հետազօտել ենք ուզում — արդեօք մտքով ըմբռնելի է մի այնպիսի ուսումն Բարոյականութեան, որ կարօտ չլինի կրօնադիտութեան վկայութիւնների, իսկ եթէ խօսում ենք կրօնից ազատագրուած բարոյականութեան մասին, այս նշանակում է հետազօտել, թէ արդեօք ոչ կրօնասէր մարդը կարող է բարոյական վարք ունենալ։

Անհերքելի ճշմարտութիւն է, որ կրօնի պատմական ներգործութիւնը բարոյականութեան վրայ եղել է շատ մեծ և բարեբար։ Արդէն ինքնին պարզ է, թէ որչափ զօրաւոր ազդեցութիւն պիտի գործէր ազգերի բարոյական զարգացման վրայ այն խորհուրդը, թէ «մարդկային գործեր հասարակութեան և բնութեան մէջ ուղղվում են այն ամենաբոլորական կարգով, որի անխափան ներգործութիւնը ապահոված է Աստուածային զօրութեամբ, և թէ այդ կարգի ամէն մի խափանումը՝ մարդկային քմահաճութեամբ՝ պէտք է ըստ արժանւոյն ստանայ իւր հատուցումը Աստուածային պատուհասող արդարութիւնից, իսկ այդպիսի հատուցումից խուսափումը երբէք չի կարողանայ յաջողեցնել մարդս իւր ոյժերով և խորամանկութիւններով» (Պիլլայդէրէր)։ Հարկ չկայ յիշեցնել, թէ հատուցման սոյն միտքը հարկաւ տւելի խոր արմատ է ստացել հանդերձեալ կենաց հաւատով, եթէ կրօնը այսչափ ազդեցութիւն է գործել բարոյական դաստիարակութեան վրայ, ինքն էլ փոխադարձաբար ներգործութիւն կրեց բարոյականութիւնից, ազնուացնելով իւր գաղափարը Աստուածութեան մասին։ Սակայն ուր որ եկեղեցականութիւնը սկսել է ճնշում գործել կրօնի ազատ արտայայտութեան և զարգարման վրայ, այն տեղ նորա

ազդեցութիւնն ազգերի վրայ սկսել է զուգընթացաբար պակասել, աշխարհիկ կենցաղագիտութեան (կուլտուրայի) աճման հետ ի միասին, իսկ բարոյականութիւնը հարկաւ պէտք է փորձեր անէր, որպէս զի կանգնի իւր սեպհական ոտքերի վրայ:

Այսպէս ծագեց եւզէմօնական (երջանկական) էտիկան, որը որ մարդկային բոլոր բարոյական գրգռումներն ու արարքները հանում է նորա բախտաւորութեան ձրգտումներից, թէպէտ ինքը չէր կարողանում պարզ որոշել, թէ իսկապէս ինչ է երջանկութիւնը, բախտաւորութիւնը: Բայց յայտնի է, որ բարոյական խնդիրներում — ոչ այնպէս, ինչպէս որ իրաւաբանական խնդիրներում — ամենայն քայլ կախում է գործող անձի ներքին գրգռումներից, իսկ եւզէմօնականութիւնը շատ շուտ պիտի հասնի այն վախճանակէտին, որ իսկոյն անդառնալի կերպով յոռետեսութիւն դառնայ, հէնց որ մենք իմանանք, թէ երջանկութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ գեղեցիկ երազ: Իսկ յայտնի է, թէ յոռետեսը ինչ գրգռումներ կունենայ իւր վարք ու բարքի մէջ: Նոյնպէս քիչ գոհացուցիչ է գաղափարապաշտ կոչուած էտիկան, որ սկիզբ առնելով Պլատոնից և ստոյիկեաններից, իւր գաղաթնակէտին հասաւ Կանտի բարոյական գաղափարապաշտութեան վարդապետութեամբ, եթէ, ասում է նա, բարոյական օրէնքը իրօք օրէնք է, այսինքն եթէ նա ընդհանրադոյն նշանակութիւն ունի, ապա ուրեմն նա պէտք է անկախ լինի մարդկային միւս բոլոր հակումներից և հիմնուած պէտք է լինի միմիայն բանականութեան վրայ: Այս խորհրդով է կառուցանում նա իւր «կատէգորիկ իմպէրատիւ» կոչուած օրէնքը (բանականութեան անպայման հրամանը), ասելով, թէ վարուի՛ր այնպէս, որ կամքիդ հիմնական օրէնքը կարողանայ միշտ և հանապազ դառնալ ընդհանուրի հաւանած օրէնսդրութեան սկզբունք: Կանտի բարոյական վարդապետութեան թոյլ կէտն է մի տեսակ երկճղութիւնը, որով նա խոր փոս է բաց արել բարոյական պարտքի և բարոյական հակումի մէջ: Եթէ անփիճելի համարենք, թէ անկարելի է մաքուր բարոյականութիւն հանել հեշտաւիրութեան ձգտող եռականութիւնից, այնու ամեն-

նայնիւ անարդարութիւն է մարդու բոլոր բնական հակումներն ու զգացումները անխտիր ետական համարել։ Իսկ մեծագոյն սխալն այն էր, որ այդպիսի անարդարութեամբ անհատը իսպառ մեկուսանում է հասարակութիւնից և ոչնչով չի ձուլվում միւս անհատների հետ ամբողջութիւն դառնալու։ Կանտի կարծիքով այդպէս է դուրս գալիս, իբրեւ թէ բոլոր բարոյական աշխարհը բաղկացած է իրարից անկախ և անյարիր բաղմամբիւ ջուկ ջուկ միութիւններից, որոնք ուրեմն միացած չեն հասարակութեան հոգով։ Իսկ եթէ նա այդ միութիւնների հանդէպ այնուամենայնիւ կարգում է գերագոյն բարիքի պահապան հանդիսացող մի Աստուածութիւն, այս հանգամանքը դառնում է մի վերջին միջոց, որպէս զի մարդս պաշտպանուի յաստեատութիւնից, որի ճանկերում նա անշուշտ պիտի ընկնի, իւր անթիւ հակումների դէմ զուր և անօգուտ կերպով օգորելուց յետոյ։ Ահա զոր օր. Շօպէնհաուէրը— որ Կանտի բարոյական վարդապետութիւնից կրօնական տարրը ջնջեց— ոչ ապաքէն յաստեատութեան փիլիսոփայ էր։ Սորա հակառակ Ֆիխտէն ի խորոց սրտէ վարդապետեց Աստուածութեան գաղափարը։ Նորա ասելով, մարդկային բանականութիւնը լոկ միայն բացարձակ բանականութիւնն արտայայտող մի ձև է, իսկ մեր բարոյական ազատութիւնը — այն գործարանն է, որով Աստուածային կամքը իւր նպատակներն է իրագործում։ Մի տեղ նա այս խօսքն է բանեցնում — «բերկրութեամբ արգարութիւնն իրագործող բարեկրօնութիւն»։ Շիլլէրը բարութիւնը Աստուածութեան է նայնացնում, ասելով, թէ «ձեր կամքի մէջ տեղ պատրաստեցէք Աստուածութեան համար, և նա իւր տիեզերական գահից կիջնի»։ Հէրդէրը մարդասիրութիւն է կոչում մեր մէջ գահակալած Աստուածայինը, ուրիշները այդ բանին տալիս են — բարոյական Գեղեցկութիւն, Ազատութիւն կամ Սէր անուն։ Հետեապէս, այդ բոլոր փիլիսոփաները — և մանաւանդ Շլայերմախէրը — վերջիվերջոյ դարձեալ յանգում են կրօնասիրական բարոյականութեան, ամենևին այդ բանին նոյնական չհամարելով եկեղեցական բարեպաշտութիւնը։ Սակայն և այնպէս այժմ գաղափարապաշտ աշխար-

հաջայեցողութեանը վտանգ է սպառնում բնագիտութիւնների յաղթական զարգացումը:

Մենք մօրալը հասկանում ենք որպէս օրակց բղխած ներքին բարոյականութիւն: Մենք չենք ուզում բռնադատել մարդուն արտաքուստ — վարձատրութեան կամ պատժի, ահի կամ յոյսի, երկնքի կամ դժօխքի օգնութիւններով, — մենք ուզում ենք նորան ի ներքուստ ազատագրել և զարացնել: Մի և նոյն ժամանակ մենք կամենում ենք բարոյականն ևս հաստատել ժամանակակից գիտութեան ամուր հիմքերի վրայ: Ըշմարիտ բարոյականութեան գերագոյն օրէնքը՝ մեր գերագոյն իդէալը հրամայում է — «դու պէտք է գիտենաս այն, ինչ որ պահանջում է մարդկային յոռաջագիտութիւնը և ոչինչ չգործել, ինչ որ այդ նպատակին խափանարար կարող է դառնալ»: Ինքը կեանքը նոյն այս գերագոյն օրէնքն է պատուիրում մեզ, Excelsior! (դէպի վեր, դէպի վսեմականը) — ահա ժամանակակից մարդու նշանաբանը: Ոչ թէ անդրգերեզմանական կենաց երջանկութեան տառապեցուցիչ կարօտը, այլ ուրախասիրտ, խիզախական, յոռաջագէժ՝ շարժումը, հայեացքը դէպի վեր, անխորտակելի հաստատվ, թէ մարդկութեան ապագան աւելի և աւելի բեղմնաւոր և ազնուացուցիչ պիտի լինի, և թէ հէնց այդ յոռտով էլ մենք ապրում ենք, պայքարում, տանջվում և մեռնում ենք — ահա մեր բարոյական պարտքը և մեզ ոգեւորող կենաց նպատակը: Այս տեղ բաժանվում են «հին» և «նոր» բարոյականի ճանապարհները: Այս նշանակում է, թէ մենք կամենում ենք բարոյականութիւնը հաստատել ոչ թէ աւանդական պատուէրների և հայեացքների վրայ այլ բարեշրջութեան գաղափարի հիմքերով: Բանականութիւնն ու խղճմունքը — ահա մեր միակ հեղինակութիւնը, որին պատրաստ ենք հպասակուելու, ահա այն ներքին օրէնքը, որ բնածին է մեր մէջ և որ զարգացել է արդարութեան և անարդարութեան զգացումների՝ որոնք շատ անգամ թէպէտ իրար հակասում են, բայց փորձառութեան շարունակութիւններով վերջ ի վերջոյ սկսում են միշտ իրար ներդաշնակել:

Այնուհետեւ մենք մեր զաւակների օրտի մէջ միայն

մի բան պէտք է տպաւորենք և կենդանացնենք, այն է՝ պատասխանատուութեան զգացմունքը, փոխանակ այն ղգացմանց, որ դարեր շարունակ արուեստակօրէն ստեղծուել են մաշուած բարոյական հայեացքներից և պատուիրաններից։ Մենք բարեշնչութեան մեծ զօրութեան հաւատ ընծայելով, արդէն այդ բանից լաւ հասկանում ենք և այն, թէ լոկ միայն քանդելով բան չի շինուի և թէ մարդկանց մեծամասնութիւնը դեռ դարձեալ կարօտ է խնամակալութեան։ Նոցա մշտական դատարարակողը եղել է դարձեալ կը լինի սովորոյթն ու աւանդութիւնը։ Ապա ուրեմն բանն այն է, որ այսօր հետև ստեղծուին աւելի լաւագոյն և «ընտելութեան համապատասխան» սովորոյթներ։ Բնութեան հնազանդ մնալ, փոխանակ նորան հակառակելու և բռնութիւններ յաւակնելու, ահա «նոր» բարոյականի առաջնորդող դրդիչը, ինչպէս որ մենք այն հասկանում ենք, այսպիսի հնազանդութեամբ կարելի է նոյն իսկ ընտելութեան օրէնքները ծառայեցնել կուլտուրական կամքին։ Այս բոլորը ցոյց է տալիս, որ ընտելան էտիկան կամ բարոյականը երկու հոսքով հաստատուած է երկրի վրայ և իւր պատուիրանները չի ստանում երկնքից։ Այս հիմունքի վրայ կարող է կադմուիլ այն ընկերական բարոյականութիւնը, ուր բազմաթիւ անհատների իրաւունքները իրար դէմ կը սահմանագծուին, և ուր պատասխանատուութեան և արդարամտութեան ղգացումները կը կրթուին այս նշանաբանով—«ինքդ քեզ օգնիր և Աստուած քեզ զօրաւիգն կը լինի»։ Ուրեմն, հին յոռետես բարոյականութեան հանդէպ, երբ որ լալագին տրտնջում էին, թէ մարդս «ի բնէ ապականուած» է, արդի նոր բարոյականութիւնը բարեիբաց առողջ է, լաւատես է։ Թող պառաւական գլուխները վախենան, իբրև թէ մեր աշխարհը կը կործանուի, եթէ հին «բարեպաշտական երկիւղի» կապերը արձակուին, իսկ մենք համողում ենք և հաւատում ենք, թէ մենք ընդհակառակ յառաջագիւժում ենք, և ոչ թէ յետադիւժում։ Նոյն հաւատը կամենում ենք անջինջ հաստատել նաև եկող սերնդեան սրտերում։ Այսօր հետև մեզ համար չարիք կը լինի միայն այն, եթէ ինքնին բարիքը ուշանայ երևան դալու և ժամանակին չծաղկի։

Այդ դէպքում մենք կը հետազօտենք չարիքի պատճառները, որպէս զի հնարաւորութիւն ունենանք այն վերացնելու: Միայն այդպէս կը կարողանանք զոպել կամբը (չարութիւնից): Առողջ և ներգաշնակ կերպով զարգացման համար մեզ հարկաւոր են ոչ թէ պատուհաս ու պատիժ, այլ լաւագոյն դաստիարակութիւն, ոչ թէ օրէնքների շատութիւն, այլ արդարագոյն օրէնքներ, ոչ թէ պատժի խստութիւն, այլ աւելի սրձակ աղատութիւն: Այն ժամանակ հանդէս կը գան այնպիսի մարդիկ, որոնք արդարեւ ընդունակ կը լինին բարիք գործելու ներքին համոզմամբ:

Անհատական և ընկերական էտիկան իրար անդադար հակառակութիւնը շատ հեշտ է լուծվում բարեշրջութեան գաղափարի տեսակէտից: Հարկաւ, իւրաքանչիւր անհատ որչափ կարելի է աւելի ազատութիւն պիտի ունենայ իւր ներգաշնակ զարգացման համար: Բայց հէնց այստեղ ծագում է մի պարտականութիւն ևս նորա համար, այն է՝ նա պէտք է ձգտէ ամենայն հնարներով կատարեալ մարդգանալու: Իսկ կատարեալ մարդը պարտաւոր է ամենայն զօրութեամբ իրականացնել ամբողջութեան բարիքը: Այսպիսի փոխադարձութեան վրայ է հիմնուած յառաջագիժութեան ապահովութիւնը: Որքան որ կարող ես, դիմիր ամէն տեսակ յաջողութիւնների, ստեղծիր քեզ համար ապրելու բարձրագոյն հնարաւորութիւնները, բայց զգուշացիր, որ չլինի թէ մարդկային առողջ ինքնասիրութիւնը, քո անձիդ պիտանի մղումները դարձնես ընչաքաղցութեան և անձնական շահամոլութեան աստիճանին: չլինի թէ մեղքովդ անցնի, իբրեւ թէ դու ազատ ես ամբողջութիւնը չյարգելու: Այսպէս է անհատական էտիկան: Իսկ ընկերականը պատուիրում է, «անհատին թող տուր զարգացման լիակատար ազատութիւն, այն ևս որքան շատ՝ աւելի լաւ, բայց այնպէս, որ աւելի ևս լրջութեամբ կարելի լինի նորանից պահանջել՝ հանրութեան նկատմամբ՝ պատասխանատուութեան զգացում»: Այժմ մենք կարող ենք տալ հիմնական բարոյականի կարճ բանաձևը, որ այս է՝ «ըստ հնարաւորութեան մարդկանց մեծագոյն թուի առողջ զարգացումն: Ով որ իւր ձգտումները այս նպատակին չի ծա-

առայեցնում, նա անբարոյական կերպով է վարվում։ Այս խորհրդով մեծագոյն «առաքինութիւն» է դառնում մարդու առողջ զարգացումը։ Հիմի աւելի պայծառ լուսով հասկանալի է դառնում Գեթթէի ասած խօսքը, «ով մարդ, եղիւ ազնիւ, բարի, կարեկից»։

Մնում է մեզ, մեր այս բարձր նպատակը ուրախ սրտով ողջունելով, քար քարի յետեից կրէնք և բերենք նոր էաիկայի շէնքը կառուցանելու համար։ Եւզէ՞մօնիզմից մենք փոխ կառնենք մարդուն յատուկ երջանկութեան ձգտումը, որը որ մեր էութեան խորքերում թագուցած բնութեան անգիտակցական կամքն է, և որ մեր հոգու մէջ պէտք է դիտակցական կամք դառնայ։ Գաղափարապաշտութիւնից մենք կը քաղենք Ֆիխտերի այն յիշատակելի մտածութիւնը, թէ գրոսի պատուիրանները եւրէք չեն կարողանայ ինքնիրան ստեղծագործել նոյն պատուիրաններով այլ իւր արարքներում և խորհելու կերպերում նա արտայայտում է միայն այն, ինչ որ բնածին է իւր էութեան մէջ և որով որ սահմանագծվում է նորա ամբողջ կեանքն ու գոհութիւնը։

Մեզ պէտք չէ ոչ կրօնական, ոչ փիլիսոփայական, և ոչ որ և է ուրիշ անունով մօրաքը, որ ներկայացնում է իսկական բարոյականութիւն, մենք ուզում ենք մի այնպիսի էաիկա, որ զերծ լինի ամէն տեսակ նախապաշարումներից, կանխակալ կարծիքներից, և հաստատուած լինի բնական, ուսումնական հիմքերի վրայ։

Սակայն որպէս զի հասնենք գերագոյն, մաքուր բարոյականութեան, մենք պէտք է զրահաւորուենք գաղափարապաշտութեամբ, այսինքն ոգևորուինք հէնց այն նպատակներով, որոնք փայլում են բարձու, շատ բարձր մեր գլխին, և որոնք ընդ առաջ են գալիս ամպագայ մարդկութեան ձգտումներին։ Անարդարութիւն կը լինի այստեղ անյիշատակ թողնել Ֆրիդրիխ Նիցշէին, որին շատ պախարակել են, բայց որին մենք շատ շնորհակալ պիտի լինինք։ Առաջինը նա եղաւ այն մտքերի արծարծողը, որոնցով որ հետզհետէ դրոշմւում են մեր ժամանակի հոգեկան ջանքերը։ Թող մեզ կշտամբեն, թող մեզ զլանան «քրիստոնեայ» անունը,

Թող մեր բարոյականը կոչեն անկրօն, փոյթ չէ, մեր խիղճը մաքուր է, ուրեմն կարող ենք այդ հալածանքներին դիմանալ: Իսկ մենք զգում ենք, որ մեզ դրդող զօրութիւնները մենք ինքներս չենք մեր անձին, թէ դէպի առաջ մեզ դրդողը խկապէս այն բացարձակ ստեղծագործ կամքն է, որ կենդանացած ենք գտնում մեր կամքի մէջ: Մենք գիտենք, որ մեզ մղում է մի այնպիսի զօրութիւն, որի շնորհով ամենայն ինչ կայ և է, և գիտենք որ սլանում ենք դէպի վեր, վստահութեամբ անձնատուր լինելով կեանքին, ապագային, մարդուն յառաջագիմութեան: Այսպիսի հաւատով զօրացած, այլ և պատասխանատուութեամբ դէպի մեր անձը, դէպի հասարակութիւնը, և դէպի կեանքը որ մեզ ծնել է և որի շրջադարձութեան մէջ մենք լոկ միայն ալիքներ կամ կամ ճառագայթներ ենք,—մենք կամենում ենք քնտելանալ և՛ սէր և՛ համարձակութիւն ունենալուն, ուղում ենք ամենայն ինչ հասկանալ, փորձել, աշխատել, առանց ատելութեան պայքարել, հպատակուելով «Աստուածային»,—ի հարկէ որչափ որ այժ և կարողութիւն ունենանք: Այս մեր հաւատի լուսափայլի մէջ մարդս պատկերանում է աճեցող, ազատ, զօրեղ, ուղղաբարոյ, պարզատես, շերմասիրտ, բարի շնորհներով,—ոչ թէ յոռետես, ամենայն ինչ մերժող, այլ խնդութեամբ գործող, երկրաւոր կենաց հաւատ քնծայող, երախտագէտ իւր շնորհներին, վստահութեամբ առաջ նայող: Եւ թէպէտ գիտենք, որ թերեւ շուտ չենք հասնի նպատակին, թէ ժողովրդեան բազմութիւնները հազիւ հազ կարողանում են գտնել իրանց ուղիղ ճանապարհը, թէ մեր առաջն բացուած շաւիղը մեզ դանդաղ կերպով է տանում, ծուռումուռ կերմաններով,—այնուամենայնիւ մենք յօժար սրտով կամենում ենք կատարել այն ամենը, ինչ որ բարիք ենք ճանաչել, որչափ կարելի է բազմաթիւ մարդկանց դրդելով, որ նոքա ևս նոյնպէս գործեն, որպէս զի «մարդս դառնայ մարդ»—երկրի գերագոյն և ազնուագոյն զաւակ:

Թարգմ. Սեդրակ Մանդինեան